

ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԻ ԴԱՐԻ ԱՍՏՐԱԽԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Աստրախանի հայ գաղութի մշակութային կյանքի մասին հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվող մի շարք ձեռագրեր, որ գրվել են Աստրախանում մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում կամ պատկանելիս են եղել աստրախանցի հայերին:

Այդ ձեռագրերից ամենահինը այն «Տումարատետրն» է, որ գրել է 1744 թ. Հարություն Ղարիբջանյան Ջուղայեցին¹: Ձեռագիրը պարունակում է իր ժամանակի համար կարևոր բուդ-մաթիվ տոմարական տեղեկություններ, օրինակ, քրիստոնեական և հայկական (այսպես կոչված «Փոքր հայկական» կամ «Ազարյան»)² տոմարների համեմատական աղյուսակ, տեղեկություններ այն մասին, թե որ տարվա որ օրերին է ընկնում այս կամ այն տոնը, չողիակի համաստեղությունների աղյուսակ, տեղեկություններ տարվա տարրեր եղանակների ընթացքում չերեկվա ու գիշերվա տեղոթյան, ինչպես նաև ամիսների օրերի թվի մասին: Հետաքրքիր է, որ շարաթվա օրերին և տարիներին վերաբերող տեղեկությունները տրվում են առաջիկա 36 տարիների համար: Դա ըստ երևույթին արված է այն պատճառով, որ այն ժամանակ օրացույցները կանոնավոր չէին հրատարակվում և ամեն մի այդպիսի ձեռագիր պետք է օգտագործվեր շատ տարիների ընթացքում: Ձեռագիրը պարունակում է նաև թվարանական 20 խնդիր, որոնց օրինակները վերցված են առևտրական ընագավառից՝ դրամական կամ չափ ու կշռի միավորներով:

Ավելի հետաքրքիր է Ղուկաս Վանանդեցու կազմած և 1699 թ. Ամստերդամում հրատարակված «Գանձ չափոց, կշռոց, թուոյ և դրամից բոլոր աշխարհի» գրքի ձեռագիր օրինակը, որ արտագրված է Աստրախանում 1753 թ.³: Այն հանգամանքը, որ այդ գիրքը XVIII դարի կեսերին արտագրվել է Աստրախանում, խոսում է նրա պարունակած տեղեկությունների նկատմամբ այստեղ եղած հետաքրքրությունը մասին: Բնորոշ է, որ ձեռագրերում բերված թվարանական խնդիրներում ու առևտրի ընագավառից վերցված օրինակներում գործածված են դրամների, չափ ու կշռի ուսական միավորները: Բացի այդ, բերված են նաև Իտալիայում, Հոլանդիայում, Թուրքիայում և Պարսկաստանում ընդունված չափ ու կշռի հիմնական միավորները:

Ամենամեծ հետաքրքրությունը ներկայացնում է XVIII դարի մի անանուն առևտրականի հուշատետրը⁴, որը վաղուց գրավել է ուսումնասիրողների ուշադրությունը⁵: Պարզված է, որ այն պատկանելիս է եղել Ռուսաստանում ճանապարհորդած մի հայ վաճառականի, որը, մեր կարծիքով, անկասկած եղել է աստրախանցի հայ: Հուշատետրում մի տեղ հեղինակը բերում է Աստրախանի և Ցարիցինի միջև ընկած փոստային կայանների ցուցակը՝ նշելով նրանց հեռավորությունը միմյանցից և միաժամանակ գրում, որ ինքը 1774 թ. Աստրախանից գնացել է Պետերբուրգ («յԱստրախանից գնում էի Ս. Պետերբուրգ»⁶): Հազիվ թե Աստրախանից բացի մի այլ քաղաքի բնակիչ գրեր «յԱստրախանից գնում էի» և կամ նշեր հենց այդ շրջանի փոստային կայանների հեռավորությունները: Ավելի ուշ շրջանի գրանցումները, որ կատարված են ձեռագրի վերջին էջերում և վերաբերում են 1843 և 1915 թթ.⁷, նույնպես վկայում են, որ այդ ձեռագիրը միշտ գտնվելիս է եղել Աստրախանում:

1 ՀՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ (Մատենադարան), ձեռ. № 8424:

2 «Փոքր Հայկական» կամ Ազարյան տոմարը, որ սկսվում էր 1616 թվականից, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում տարածված էր Նոր-Ջուղայում և այն հայկական գաղութներում (օրինակ՝ Աստրախանում), որտեղ բավական մեծ թիվ էին կազմում նորջուղայեցիները:

3 Մատենադարան, ձեռ. № 9284:

4 Մատենադարան, ձեռ. № 5954:

5 Տե՛ս Ա. Мнацаканян, Об одной древней рукописи, «Коммунист», օրաթերթ, 12 сентября 1947, К. Н. Григорян, Армянская культурная колония в Петербурге в XVIII веке, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ), 1933, № 9: Э. А. А. Копян, Страница из истории армяно-русских литературных связей XVIII в., «Բանբեր Մատենադարանի», 1962, № 6:

6 Մատենադարան, ձեռ. № 5954, էջ 127ր:

7 Նույն տեղում, էջ 150ր—151:

Հիշյալ հանգամանքները ստիպում են ենթադրել, որ տվյալ հուշատետրը պատկանելիս է եղել մի աստրախանցի հայ վաճառականի, որը հաճախ էր լինում Մոսկվայում ու Պետերբուրգում և իր գրառումները կատարել է ըստ իր տարիների ընթացքում:

Այս հուշատետրը վկայում է նրա հեղինակի ընդարձակ գիտելիքների, լայն մտահորիզոնի մասին: Ձեռագրի մեծ մասը կազմում է «Ծրագրանք», որի մեջ գրանցված են ոչ միայն հայկական, այլև ռուսական երգեր:

Ժողովրդական բանահյուսության նկատմամբ ձեռագրի հեղինակի հետաքրքրության մասին են խոսում նաև գրի առած հայկական, ռուսական (գրված ռուսական տառերով) և նույնիսկ գերմանական առածները: Ձեռագրում տեղ գտած այբուբենները (հայկական, ռուսական, լատինական և արաբական) խոսում են նրա հեղինակի լեզվաբանական հետաքրքրասիրության մասին: Դրանց պետք է ավելացնել նաև հուշատետրում բերված հայերեն-ռուսերեն լեզուների բառարանը և ռուսերեն քերականական վարժությունները:

Այդ ժամանակաշրջանի համար սովորական դարձած տոմարական տեղեկություններից բացի, հուշատետրի հեղինակը հանգամանորեն բացատրում է հուլյան և գրիգորյան տոմարների տարբերությունը: Նման տիպի ձեռագրերի համար բոլորովին անսովոր են հուշատետրի պառունակած այն տեղեկությունները, որ վերաբերում են ռուսաց պատմությանը:

Վերջապես, անհայտ աստրախանցու արտակարգ հետաքրքրասիրության մասին է վկայում Մոնգոլիայի եղբայրների՝ օղապարիկով կատարած թռիչքի նկարագրությունը: Հուշատետրում բերված է նույնիսկ այդ օղապարիկի նկարը: Ըստ երևույթին հեղինակն այդ նյութերը վերցրել ու թարգմանել է որևէ տպագիր հրատարակությունից:

XVIII դարի կեսերին ստեղծվեց «Աստրախանի հայերի Դատաստանագիրքը», որը տվյալ ժամանակաշրջանի ամենահետաքրքիր իրավական փաստաթղթերից մեկն է: Միաժամանակ հարկ է նշել, որ ույդ Դատաստանագիրքը հայկական այն սակավաթիվ օրենսգրքերից է, որոնք գործնական կիրառում ունենին:

Դատաստանագրքի կազմողներն էին Նդիազար Գրիգորյանը, Գրիգոր Կամպանյանը և Սարգիս Օհանյանը: Հատկապես ի դեմս Գրիգոր Կամպանյանի (Գրիգորի Կամպանովի) մենք տեսնում ենք չափազանց բազմակողմանի գիտելիքների ու հետաքրքրությունների տեր մի անձնավորության և աչքի ընկնող հասարակական գործչի:

1750—60-ական թթ. Կամպանյանը մասնակցում է վերոհիշյալ Դատաստանագիրքը կազմելու աշխատանքին, որն ավարտվում է 1765 թ.: Մատենադարանի ձեռագրերի բաժնում պահպանվում է մի «Ծրագրանք», որը նույնպես կազմել է Կամպանյանը 1766—67 թթ. այն պարունակում է հոգևոր բնույթի 42 երգեր ու հայերեն տառերով գրված մի քանի պարսկական «բառարաններ»:

Կամպանյանի՝ պարսկերեն գիտենալու մասին վկայում է մի այլ փաստ ևս: Հ. Անասյանի «Հայկական մատենագիտություն» գրքում տեղեկություններ են տրված Վենետիկում պահվող մի ձեռագրի մասին. դա արաբական առաջին խալիֆներից մեկի՝ Ալու տված վալիբադիրն է, որը պարսկերենից հայերեն է թարգմանել Գ. Կամպանյանը 1767 թ.⁸

Մովսես Սարաֆովը 1769 թ. հիշատակում է Կամպանյանի անունը այն շնորհավոր հայերի թվում, որոնց գիտությունը Սարաֆովը կազմել էր Հայաստանն ազատագրելու նախադիմը՝ Կամպանյանը հայտնի էր նաև որպես Աստրախանի ամենախոշոր առևտրականներից ու մետաքսի մանուֆակտուրաների տերերից մեկը:

Աստրախանի հայերի կուլտուրական միջավայրից էր սերում նաև հետագայում Պետերբուրգում հայտնի դարձած Կլեոպատրա Սարաֆովան, որի գրչին է պատկանում «Գիրք որ կոչը

8 Մատենադարան, ձեռ. № 7383: Այդ Դատաստանագրքի մանրամասն բնութագիրն ու հատուկ վերլուծությունը տես Յ. Պողոսյանի «Աստրախանի հայերի Դատաստանագիրքը» («Բանբեր Մատենադարանի», № 6, 1962), «Դատարանագրությունը ըստ Աստրախանի հայոց Դատաստանագրքի» ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1963, № 1) և «Դատավարությունը ըստ Աստրախանի հայոց Դատաստանագրքի» («Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 1) հոդվածներում:

9 Մատենադարան, ձեռ. № 9840:

10 Տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հատ. Ա, Երևան, 1959, էջ 414—415:

11 Տե՛ս А. Р. Иоаннисян, Иосиф Эмин, Ереван, 1945, էջ 268:

րանալի գիտությունն աշխատությունը, որ հրատարակված է Պետերբուրգի հայկական տպարանում 1788 թ. 4. Սարաֆովան աստրախանցի խոշոր հայ վաճառական և հասարակական գործիչ Մովսես Սարաֆովի դուստրն էր։ Հիշյալ գրքից երևում է, որ նա շատ լավ իմացել է հայերենն ու ռուսերենը և ունեցել է իր ժամանակի համար առատավոր հասարակական-քաղաքական հայացքներ։

Այն հանդամանքը, որ պահպանված ձեռագրերից մի քանիսը երգարաններ են, խոսում է երաժշտական արվեստի նկատմամբ աստրախանցի հայերի հետաքրքրության մասին։

Առևտրի ասպարեզում Աստրախանը 19-րդ դարում խաղում էր կարևոր դեր։ Աստրախանի պայմաններում անհրաժեշտ էին ոչ միայն պարզապես գրագետ մարդիկ, այլև մասնագետներ, որոնք իմանային ռազմական և ծովային գործը, դիտենային լեզուներ և արհեստներ։ Հայերի հետ կամ նրանց միջնորդությամբ կատարվող առևտուրը ռուս առևտրականներից պահանջում էր գիտենալ հայոց լեզուն։

Արտաքին գործերի կոլեգիայի 1753 թ. հունիսի 28-ի և Ստատս-կոնտորայի նույն թվականի սեպտեմբերի 4-ի հրամանագրերով կարգադրված էր Աստրախանում 6 աշակերտ ընդունել՝ թուրքերեն, պարսկերեն, թաթարերեն և հայերեն սովորեցնելու համար, ըստ որում նախատեսված էր յուրաքանչյուր տարի նրանց ուսուցման վրա Աստրախանի նահանգային գրասենյակի հաշվին ծախսել 250 ռուբլի¹²։

Հետագայում հայոց լեզվի ուսուցումը մտցվեց նաև 1788 թ. Աստրախանում բացված Գլխավոր ժողովրդական ուսումնարանում (որը 1806 թ. դարձավ դիմնագիա)։ Այդ ուսումնարանում հատուկ դասարան էր ստեղծվել շարքային զինվորների որդիների համար, որոնց սովորեցնում էին կամիկերեն, թաթարերեն, թուրքերեն, պարսկերեն և հայերեն։ Հայոց լեզվի դասատուն առևտրական Արտեմի Դելյանովն էր¹³։

Արևելյան լեզուների ուսուցումը Գլխավոր ժողովրդական ուսումնարանում 1799 թ. դադարեցվեց՝ Երևելյան լեզուներ ուսումնասիրելու ասպարեզում աշակերտների ցույց տված սամանափակ հաջողությունների հետևանքով¹⁴։ Ինչպես տեսնում ենք, արևելյան լեզուներին տիրապետող սեփական կադրեր ստեղծելու ուղղությամբ կառավարության փորձերը անհաջողություն կրեցին։ Ռուսական դիվանագիտության և արևելյան առևտրի ասպարեզում որպես թարգմանիչներ և միջնորդներ շարունակում էին հանդես գալ գլխավորապես հայերը։ Նրանք ակտիվորեն օժանդակում էին Աստրախանում ուսումնական հիմնարկներ ստեղծելու գործին։ Որպարգովում է, որ ուսումնարանի կազմակերպման համար հատկացված պետական գումարները (4000 ռ.) չեն ռավականացնում, Աստրախանի ռուսական, հայկական և թաթարական համայնքները հանգանակություն են կազմակերպում տեղի առևտրականների ու այլ քաղաքացիների շնորհիվ և հավաքված գումարը (3000 ռ.) հատկացնում ուսումնարանի կարիքները հոգայուն¹⁵։

Մի քանի տարի հետո, երբ հարկ եղավ ուսումնարանի համար նոր շենք կառուցել, այդ գործին ձեռնամուխ եղավ հայ վաճառական Մակար Առաքելովը, այդ շենքը կառուցվեց 1.93—95 թթ.¹⁶։

Հայերի մասնակցությունը Աստրախանի առաջին խոշոր ուսումնական հիմնարկի կազմակերպմանը վկայում է ուսման և մշակույթի զարգացման ասպարեզում հայերի մեծ ձգտումը մասին։ Սակայն մեզ ավելի հետաքրքրում է այն հարցը, թե XVIII դարում Աստրախանում եղել է արդյոք զուտ հայկական որևէ դպրոց։

Հայտնի է, որ Աստրախանի ռազմաթիվ հայ սերունդներ պահպանել էին մայրենի լեզուն, որ շատ հայերի մոտ կային հայերեն գրքեր, իսկ դատարաններում գրադրությունը կատարվում էր հայերենով, — այս ամենը խոսում է հոգու ալն բանի, որ դեռևս XVIII դարում Աստրախանում գոյություն ուներ հայկական դպրոց։

Արդեն 1782 թ. Պետերբուրգի արդյունաբերող Մարգար Մանուշարյանը դիմել էր Պետերբուրգի գիտությունների ակադեմիային՝ Աստրախանում հայկական դպրոց բացելու խնդրանքով։

¹² 86-й Государственный архив Астраханской области (ГААО), ф. 394 (Астрах Губ. канцелярия), оп. 1, ед. хр. 1825.

¹³ 86-й Т. Остроумов, Исторический очерк Астраханской 1-й мужской гимназии за время с 1806 по 1914 год, Астрахань, 1916, էջ 41.

¹⁴ Նույն տեղում։

¹⁵ Նույն տեղում, էջ 21.

¹⁶ Նույն տեղում, էջ 51.

Նույն թվականին Պետերբուրգ ուղևորվեց Թադևոս վարդապետ Պոլսեցին, որը գնեց այդ տպարանը 12 հազար ռուբլով²³։

Նույն տարին Արղությանը այդ տպարանը տեղափոխում է Նոր Նախիջևան, ըստ երևույթին ցանկանալով մոտեցնել այն Ռուսաստանի հարավի հայկական գաղութներին, քանի որ Պետերբուրգում գտնվելով՝ տպարանը կտրված էր Ռուսաստանի հայերի հիմնական զանգվածից և անջատված էր բուն Հայաստանից։ Միաժամանակ Արղությանը տպարանի աշխատանքներին մասնակից է դարձնում նոր մարդկանց, որոնք աչքի էին ընկնում կրթությամբ և լեզուների իմացությամբ։ Դրանք էին վերևում հիշատակված Թադևոս վարդապետ Մարությանը (Պոլսեցի) և Մարդար Խոջենց Երևանցին²⁴։

Այս միջոցառումները տվեցին իրենց արդյունքները՝ Նոր Նախիջևանում գործելու 6—7 տարվա ընթացքում տպարանը հրատարակեց 15 դիրք։

Չնայած այս ամենին, Արղությանը գոհ չէր տպարանի աշխատանքից և որոշում է տպարանը փոխադրել Աստրախան, որտեղ գտնվում էր նրա մշտական պաշտոնատեղին։ Իր այդ մտադրության մասին նա հայտնում էր դեռևս 1795 թ. Ստ. Տեր-Հարությունյանին գրած վերոհիշյալ նամակում²⁵։ Հայկական այդ տպարանի նոր տեղափոխությունը Արղությանը կատարեց 1796 թ., 1798 թ. մարտին կայսերական հրովարտակով հաստատվեց տպարանի հանձնումը առաջնորդարանին, իսկ ինքը՝ Արղությանը, նշանակվեց գրաքննիչ²⁶։

Տպարանի գործունեության աստրախանյան շրջանը մինչև օրս հայ պատմագրության կողմից ուսումնասիրված չէ։ Հայ տպագրության պատմության հեղինակները (Լեոն, Լևոնյանը և ուրիշներ) սահմանափակվել են միայն տպարանը Աստրախան տեղափոխելու փաստը նշելով։

Աստրախանի առաջին հայկական տպարանի պատմության մասին հիմնական սկզբնաղբյուր են հանդիսանում Թադևոս վարդապետի նամակները Հովսեփ Արղությանին, որ գրված են 1797—1800 թթ. և պահվում են Մատենադարանում (կաթողիկոսական դիվանում)։ Արղությանը Թադևոս վարդապետին հրավիրել էր Կոստանդնուպոլսից դեռևս 1787 թ.²⁷ Սկզբում նա կատարում էր Արղությանի քարտուղարի պարտականությունները, իսկ հետագայում Արղությանի հանձնարարությամբ սրբագրում էր հայկական տպարանի հրատարակած գրքերը²⁸։ Թադևոս վարդապետի՝ մեզ հետաքրքրող նամակները վերաբերում են Արղությանի՝ նախավերջին և վերջին անգամ Պետերբուրգից Աստրախան գալու միջև ընկած ժամանակաշրջանին։

Աստրախանում տպագրված առաջին հայերեն գրքի՝ «Սաղմոսի մեկնիչ»-ի վրա նշված է տպագրության թվականը՝ 21 մարտի 1797 թ., իսկ հաջորդի՝ «Էֆեմերդէ»-ի վրա՝ 28 սեպտեմբերի 1797 թ.։ Այդ երկու գրքերից առաջինը²⁹ պարունակում էր XIII դ. հայ հեղինակ Վարդան վարդապետ Բարձրբերդցու մեկնությունները։ Երկրորդ գիրքը³⁰ նույնպես բավական լայն տարածում ունեւ ժամանակի կրթված խավերի շրջանում (այդ գրքի նախորդ հրատարակությունը լույս էր ընծայվել Վենետիկում, 1796 թ.) և պարունակում էր տոմարական զանազան տեղեկություններ, գուշակություններ, երազահան և այլն։ Երկու գրքերի ընտրությունն էլ պատահական չէր, քանի որ ժամանակի ընթերցողները ներկայացնում էին նրանց պահանջը։

Աստրախանի տպարանը իր գործունեության այս շրջանում հիմնականում զբաղված էր այդ երկու գրքերի տպագրությամբ։ Թադևոս վարդապետի և Արղությանի նամակագրությունից շատ պարզ երևում են այն դժվարությունները, որ խանգարում էին տպարանի աշխատանքներին։

23 Տե՛ս «Դիւտն հայոց պատմութեան», գիրք Թ, էջ 14։

24 Տե՛ս Լ և ո, նշվ. աշխ., էջ 197։

25 Տե՛ս «Դիւտն հայոց պատմութեան», գիրք Թ, էջ 183—184։

26 Տե՛ս Полное собрание законов Российской империи, СПб, 1830, т. XXV. 18.455.

27 Տե՛ս «Դիւտն հայոց պատմութեան», գիրք Ա—Բ, էջ 80։

28 Տե՛ս Լ և ո, հայոց պատմություն, 3-րդ հատոր, էջ 1055։

29 «Մեկնութիւն Սաղմոսաց Դաւթի, որ յորինեալ սրանչելի Աստուածաբանութիւն սուրբ և երջանիկ Տեառն Սեծին Վարդանայ Բարձրաբերդցոյ՝ լեզուագետ և բազմալստակ վարդապետին Հայոցս...»։

30 «Գրքոյկ կոչեցեալ էֆեմերտէ, յորում պարունակի նախ՝ շրջան մշտնջենաւոր զեկուցմանց, ապա գուշակութիւնք ամսական եղանակացն փոփոխմանց ըստ օրոց, և աղիւսակի երկոտասան ամսոցն, յորս տեսանի յիւրաքանչիւր աւուրս պատահեալ՝ և բազմադիմի ներգործութիւն. յետ այսոց բուն Տօմար Հայոց և Հռոմայեցոց. կից նմին պարզատօմար. մարմնախաղաց. երազահան, և տղայական հանճարեղութիւնք և պէսպէս ըզրոնլի խաղք»։

Ըր հենց առաջին նամակում Թաղևուր գանգատվում է թղթի պակասությունից և խնդրում է արագացնել թղթի առաքումը Հովհաննես Լազարյանի ֆարրիկաներից³¹։ Շատ բարդություններ էին լսողանում տպարանում աշխատողների պատճառով։ Բացի Թաղևուր Մարությանից և Մարգար խոջենցից (որին Թաղևուր համարում էր խիստ հարկավոր և օգտակար աշխատակից)³², որոնք պատասխանատու էին գրական աշխատանքների համար, տպարանում ըստ մեզ հասած փաստաթղթերի, աշխատում էին մեկական գրաշար, տպագրիչ և կաղմարար, ինչպես նաև մի քանի օգնական ու աշակերտ։ Բանվորների այս կազմը մշտական չէր, և հենց այդ էլ ամենից շատ հոգս էր պատճառում։ 1798 թ. մայիսին Թաղևուր նամակով հայտնում է Արդությանին, որ տպարանը ոչ գրաշար ունի, ոչ էլ տպագրիչ³³։

Այդ ամենի հետևանքով 1798 թ. կեսերին հազիվ ավարտվել էր երկու գրքերից առաջինի՝ «Սաղմոսի մեկնիչ»-ի տպագրությունը, թեպետ այն դեռ չէր կազմված և նկարագարողված (նկարների պատկերված էին Պետերբուրգի ռուսական տպարանում³⁴)։ Միայն սեպտեմբերին Թաղևուր մի նամակով հաղորդում է տպարանի գործերի թիվ թե շատ բարեհաջող վիճակի մասին³⁵։ Թե գործի համար ինչքան կարևոր էր տպարանի ամեն մի աշխատողը, պարզ երևում է այն բանից, որ Թաղևուր իր նամակներում գանգատվում է անգամ այնպիսի շնչին դժվարությունների պատճառով, ինչպիսիք էին, օրինակ, մի աշակերտի աշխատանքից հեռանալը³⁶, մյուսի ձեռքի վնասվելը³⁷, տիրացու Մարգարի (խոջենցի) հիվանդությունը³⁸ և այլն։

1798 թ. նոյեմբերի վերջին և դեկտեմբերի սկզբին Թաղևուր կրկին հայտնում է, որ «էֆեմերուլ»-ի տպագրությունը գործի կեսում կանգնեցվել է³⁹։ Թեպետ նա հույս էր հայտնում, որ շուտով տպագրությունը կվերսկսվի, սակայն այդ հույսը չարդարացավ, որովհետև 1798—99 թթ. ձմեռը չափազանց խիստ էր և տպարանի աշխատանքը վերսկսվեց միայն 1799 թ. ապրիլին⁴⁰։ Մեկ ամիս անց պարզվում է, որ տպարանը խիստ կարիք ունի մի նոր թափանիվի⁴¹։

Միաժամանակ հարց էր բարձրացել տպարանը նոր շենք փոխադրելու մասին։ Այդ ամենի հետևանքով «էֆեմերուլ»-ի տպագրությունը կրկին դադարեցվեց և ավարտվեց միայն օգոստոսին, թեպետ դեռ չկային նկարներն ու վերջաբանը⁴²։

Գրքի տպագրությունն ավարտվելուց թիվ առաջ, 1799 թ. հուլիսին Թաղևուր վարդապետը Արդությանին հաղորդում է, որ սկսվել է այրբենարանի տպագրությունը⁴³։ Սակայն մենք հետազայում ոչ մի հիշատակության չենք հանդիպում այդ գրքի հրատարակման մասին։ Այդ գիրքը չի նշված նաև որեւէ դրացուցակում։ Ըստ երևույթին, ինչ-որ պատճառներով այրբենարանը չի հրատարակվել։ Պատճառներից մեկը, դուցե, այն է եղել, որ այդ ժամանակ տպարանը զրաղված է եղել կարևոր ու շտապ գործով՝ ռուսական կառավարության կողմից XVIII դարի կեսին հայերին տրված արտոնությունների կայսերական հրովարտականների հայերեն թարգմանությունների հրատարակման աշխատանքով։ Չպետք է մոռանալ, որ հայկական տպարանի կարևոր խնդիրներից մեկն էլ այն էր, որ նա կոչված էր պրոպագանդելու կառավարության այն միջոցառումները, որոնք ուղղված էին այլ երկրներից հայերին (Խուսաստան ներգրավելուն)։ Հենց այդ նպատակով էլ ձեռնարկված էր ռուսական կառավարության այն կարևորագույն ակտների թարգմանությունն ու հրատարակումը, ոչոք վերաբերում էին հայերին։

Հատկապես 1797—1799 թթ. ընթացքում Պավել 1-ը հայերին վերաբերող մի շարք հրովարտականներ էր արձակել։ Գուցե հենց այդ պատճառով էլ միտք էր առաջացել հայերեն մի առանձին գրքույկ հրատարակել, որը պարունակեր բոլոր գործող հրովարտականների տեքստերը։ Այդ

31 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 6, վավ. 127։

32 Նույն տեղում, թղթ. 8, վավ. 88։

33 Նույն տեղում, վավ. 40։

34 Նույն տեղում, վավ. 39 և 40։

35 Նույն տեղում, վավ. 66։

36 Նույն տեղում, վավ. 68։

37 Նույն տեղում, թղթ. 9, վավ. 116 և 118։

38 Նույն տեղում, վավ. 150։

39 Նույն տեղում, թղթ. 8, վավ. 88 և 94։

40 Նույն տեղում, վավ. 11, 27, 28 և 58։

41 Նույն տեղում, վավ. 80։

42 Նույն տեղում, թղթ. 9, վավ. 116, 118 և 127։

43 Նույն տեղում, վավ. 100։

գրություն, որ կոչվում է «Թարգմանութիւն պրիվիլեկացն հայոց», լույս տեսավ 1800 թ. աշնանը:

Երբույզը լույս տեսավ այն օրերին, երբ Հովսեփ Արղությանը (արդեն որպես կաթողիկոս) գտնվում էր Աստրախանում: Հոկտեմբերի 7-ին քաղաքացիների ժողովում, որ հրավիրված էր հայերի իրավունքների ու առանձնաշնորհումների վերաբերյալ կառավարական հրովարտակը հանձնելու առթիվ, կաթողիկոսը հանդես եկավ մի ճառով և ջերմ շնորհակալություն հայտնեց ռուսական կառավարությանը: Նրա այդ ելույթի տեքստը ես շուտով հրատարակվեց:

Աստրախանի հայկական տպարանի մշակութային-քաղաքական գերը չէր սպառվում գրքերի հրատարակումով և ռուսական կառավարության հրամանագրերի թարգմանությամբ: Տպարանը միաժամանակ կազմակերպում էր գրքերի առարումը Հայաստան կամ հայկական այլ գաղութներ:

Դեռևս այն ժամանակ, երբ տպարանը գտնվում էր Պետերբուրգում, 1788 թ. Հովսեփ Արղությանը գրում է Հնդկաստանում գտնվող Տեր-Ստեփանին, որ Աստրախանից Նոր Զուլա՝ ինչպես նաև Բաղդադ ու Բասրա է ուղարկված ավելի քան 100 հայերեն գիրք (այբբենարան, աղոթագիրք և այլն)⁴⁴:

Տպարանը Աստրախան փոխադրելուց հետո Աստրախանի գաղութի գերը հայերեն գրականության տարածման գործում ավելի մեծացավ: Ըր առաջին նամակներից մեկում (1797 թ. հոկտեմբերին) Թադևոս վարդապետը հաղորդում էր Հովսեփ արքեպիսկոպոսին, որ ղզլարցի մրդդաի Բարրիելի միջոցով նրան է ուղարկում մի մեծ կապոց գիրք, որը պարունակում է 10 օրինակ «Սաղմոսի մեկնիչ», 6 օրինակ «Ժամագիրք» և 100 աղոթքներ («Տէրոգորմեայք»)⁴⁵: 1798 թ. հուլիսին նա հաղորդում է, որ Նոր Նախիջևան է ուղարկված երկու արկղ գիրք, այդ թվում 150 օրինակ ոսկեկազմ «Սաղմոսի մեկնիչ», ինչպես նաև «Պատմութիւն Տելեմարի», «Տէրոգորմեայք» և այլ գրքեր, որոնք տպագրված էին դեռևս Նոր Նախիջևանում և, ըստ երևույթի, տպարանի հետ միաժամանակ փոխադրվել էին Աստրախան: Այդ նույն նամակով նա խնդրում է Կարապետ վարդապետին՝ գրքերը շուտափույթ ուղարկել Կոստանդնուպոլիս⁴⁶: Հետագա նամակներից մեկում նա առաջարկում է Թուրքիայում այդ գրքերից «Սաղմոսի մեկնիչ»-ը և «Տելեմարոս»-ը վաճառել 5-ական ղուռուշով, իսկ մնացածները՝ 100 փարայով: Նա ջգուշացնում է, որ ավելի բարձր գին նշանակելու դեպքում գրքերի տարածման գործը կգժվարանա⁴⁷:

Այս բոլոր փաստերը բացահայտում են հայկական տպարանի ղեկավարների բազմակողմանի և բազմաշխատ գործունեությունը. դա ամենից առաջ վերաբերում է Թադևոս վարդապետին, որը, ինչպես պարզվում է նրա նամակներից, տպարանի հոգին էր: Կաթողիկոսի Աստրախան գալուց հետո տպարանի գործունեությունը ավելի ևս աշխուժացավ, սակայն 1800 թ. վերջերին Թադևոս վարդապետը հիվանդացավ և դեկտեմբերի 16-ին վախճանվեց⁴⁸:

Թադևոս վարդապետի մահը մեծ կորուստ էր Աստրախանի հայկական գաղութի համար: Արղությանի երկարատև բացակայությունների ժամանակ Թադևոսը գաղութի փաստական ղեկավարն էր դառնում: Նրա մահվան առթիվ ավագերեց Սկոպինը գրում էր. «Այս մարդը հարգված էր հայերի կողմից, որպես լավ կրթված անձնավորություն, որը շատ լավ քարոզներ էր ասում և համարվում էր նույնիսկ պատրիարքից էլ ավելի խելացի»⁴⁹:

Թադևոս վարդապետի, ինչպես և Հովսեփ Արղությանի մահը (որոնք Ռուսաստանում առաջին հայկական տպարանի ղեկավարներն էին) ամենածանր հետևանքներն ունեցավ տպարանի գործունեության համար. այդ մամուլից սկսած տպարանը դադարեց աշխատելուց: Հայ եկեղեցու ղեկավար շրջանները, այդ թվում նաև Ռուսաստանի թեմում, զբաղված էին կաթողիկոսական թափուր աթոռի համար մղվող պայքարով, և ոչ ոք չկարողացավ նախաձեռնություն հանդես բերել տպարանի աշխատանքները վերսկսելու համար:

⁴⁴ Տե՛ս «Դիւան հայոց պատմութեան», գիրք Կ, էջ 81—82:

⁴⁵ Մատենադարան, Կաթողիկոսական գիվան, թղթ. 6, վավ. 96:

⁴⁶ Նույն տեղում, թղթ. 8, վավ. 54 և 60:

⁴⁷ Նույն տեղում, վավ. 61:

⁴⁸ Տե՛ս «Записки дневные о делах и вещах достопамятных протопрее Н. Г. Скопина», «Саратовский исторический сборник», т. 1, Саратов, 1891, էջ 227:

⁴⁹ Նույն տեղում, էջ 228:

Սակայն Աստրախանի հայերը չէին կորցնում տպարանը վերականգնելու իրենց հույսերը 1815 թ. նրանք օգնեցին գիմնազիայի ուսուցիչ Վեյսկհոպֆենին՝ մի նոր հայկական տպագրական մամուլ ստեղծելու գործում, որի շնորհիվ Վեյսկհոպֆենին հաջողվեց 1815 թ. հրատարակել «Ռուս-հայերեն այբբենարան», իսկ 1816 թ. տպագրել «Արևելյան ծանուցմունք»-ի հայկական օրինակները⁵⁰:

1816 թ. Վեյսկհոպֆենը վախճանվեց, բայց երկու տարի հետո հաջողվեց վերականգնել հայկական հին (եաղարյանի) տպարանը: 1818-ից մինչև 1832 թ. Ն. Ֆ. Լեոնտևի տվյալներով, այդտեղ տպագրվել է ութ գիրք⁵¹: Այսպիսով, Ռուսաստանի առաջին հայկական տպարանը շարունակում էր իր կուլտուր-լուսավորական և հայրենասիրական գործունեությունը, չնայած որ Անդրկովկասի՝ Ռուսաստանին միանալուց հետո տպարանն այլևս այն դերը չէր կատարում, ինչ XVIII դ. երկրորդ կեսին, երբ հանդիսանում էր հայ ժողովրդի՝ իր ազգային ինքնությունությունը պահպանելու համար մղած պայքարի անմիջական գործիք:

Աստրախանի հայերի մշակութային կյանքը ցույց տվող վերոհիշյալ փաստերը թույլ են տալիս եզրակացնել, որ XVIII դարում Աստրախանի հայ բնակչությունը ապրում էր ողջ հայ ժողովրդի համար միասնական հոգևոր կյանքով, զգում էր, որ ինքն այդ ժողովրդի մի անրաժան մասնիկն է:

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ

ՀԱՅ-ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԵՆՈՐ ՓԱՍՏ (VII ԴԱՐ)

VII դարը Բյուզանդիայի պատմության ամենաճակատագրական շրջաններից մեկն է: Այս դարում սկսված արաբական արշավանքները հարցադրեցին տակ դրեցին Բյուզանդական կայսրության գոյությունը: 636—653 թթ. ընթացքում արաբները գրեթե ամեն տարի գրավում էին մեկական բյուզանդական տերիտորիա՝ Սիրիա (636), Նուսադեմ (637), Անտիոք (638), Մեսոպոտամիա (639), Եգիպտոս (640—642), Կիրենայիկա, Տրիպոլիտանիա (642—643), Հյուսիսային Աֆրիկա (647), Փոքր Ասիա (651), Հայաստան (653)՝:

Հայաստանը, ի տարբերություն մյուսների, արաբական խալիֆայի գերիշխանությունն ընդունեց մի կամավոր պայմանագրով, որը նրան ապահովում էր բացառիկ նպաստավոր պայմաններ² և տալիս էր գրեթե ավելի շատ արտոնություններ, քան տվել էին բյուզանդացիները: Այս ձևով զաշխերը գլուխ քերեց ժամանակի խոշոր քաղաքական և ռազմական գործիչ, Հայոց պատրիկ Թեոփորոս Թշատունու³, որը արաբների իշխանությունն ընդունելուց հետո էլ շա-

⁵⁰ Տե՛ս Վ. Ռ. Խաչատրյան և Վ. Գրիգորյան, Ռուսահայոց առաջին պարբերական «Արևելյան ծանուցմունք»-ը, «Սովետական գրականություն», 1957, № 3:

⁵¹ Տե՛ս «Список книг, брошюр и периодических изданий, печатавшихся в астраханских типографиях», Астрахань, 1869:

¹ Մ. Диль, История Византийской империи. Перевод с французского А. Е. Ревинской, Москва, 1948, էջ 48—49:

² А. Müller. Der Islam im Morgen- und Abendland, I Bd., Berlin, 1885, էջ 261: Նույն հեղոր Դանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր Բ, Բ մասի նյութեր, Երևան, 1960, էջ 221:

³ Թեոփանեսի Chronographia-յում (vol. I, Bonnæ, MDCCCXXXIX=1839, էջ 527) Թեոփորոս Թշատունու անվան փոխարեն կարդում ենք Παταρχαθης (Παταρχαθης ὁ τῶν Ἀρμενίων πατριχος): Մեզ թվում է, սա արդյունք է գրչական թյուրիմացության: Παταρχαθης անունով հայկական պատրիկ գոյություն չի ունեցել (առհասարակ παταρχαθης անուն գոյություն չունի): Թեոփանեսն ինքը նշում է կոստանդին II կայսեր ժամանակ կնքված միայն մեկ հայ-արաբական պայմանագիր: Ուրեմն՝ նա ինքը ժխտում է երկրորդ զաշխերի (հետևաբար նաև՝ երկրորդ հայ պատրիկի) գոյությունը: Պետք է ենթադրել, որ Թեոփանեսը նույնպես նկատի է ունեցնել Թեոփորոս Թշատունուն, բայց այս պատրիկի անունը գրե-